

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

— Ի 12-ն հոկտ. Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Ղարաբաղի հրամայեաց նախ՝ զԳաբրիէլ քահանայն Աբրահամեանց, որ նամակաւ իւրով յ30 սեպտեմբերի 1906 ամի յանձնարարեալ Ստեփաննոս քահանայի Վարդապետեանց Գիւնէյ-Ճարտար գեղջ Շուշի գաւառի՝ կատարել զպսակ Մախմուրի ընդ Ալլահվերդիի Ոսկանեանց — առաքել յապաշխարութիւն ի վանս Ճալէթու միամեայ ժամանակաւ, յանձնելով զծուխս նորա ի հովուութիւն այլում քահանայի, որ պարտի զմի երրորդ մասն յանձնել ընտանեաց ծխատէր քահանայի, բառնալով զաթոռահասն կրկին քանակութեամբ ի մասնէ արդեանց, որ մնալոց է ընտանեաց ապաշխարող քահանային. երկրորդ՝ զԳրիգոր քահանայն Տէր Գրիգորեանց Ղուզէյ-Ճարտար գեղջ, որ մեղսակից է գործոյս — արկանել ընդ վաթսուն ռուբլի տուգանաց. երրորդ՝ զգործակալ Սուրէն քահանայն Տէր Իսրայէլեանց արձակելով ի

պաշտամանէ գործակալութեան, արկանել ընդ երեսուն ռուբլի տուգանաց. չորրորդ՝ զՄատեփաննոս քահանայն արկանել ընդ տասն ռուբլի տուգանաց. և հինգերորդ՝ զպսակ Մախմուրի Մուսայելեանց ընդ Ալլահվերդի Աստուածատրեանց ճանաչել վաւերական։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի։ Հ. 807.

— Ի 15-ն հոկտ. Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Աստրախանի տալ պաշտօնաթող աստիճանաւորին Գէորգայ Խալաթճեանց ի վիճակային արդեանց թեմին ի տարին երկերիւր քառասուն ռուբլի կենսաթոշակ մինչ ցմահ նորին։ Հ. 817.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց հաստատել զեղբակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, որ վասն առաքելոյ զՍիմէոն քահանայն Տէր Դանիէլեանց յապաշխարութիւն ի վանս Սևանայ միամեայ ժամանակաւ։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի։ Հ. 814.

— Ի 17-ն հոկտ. Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Շամախւոյ ընդունել զՊետրոսն Տ. Սահակեան ի հոգևոր կոչումն առ ի ձեռնադրել ի քահանայ ի վերայ ժողովրդեան Բեալբանդ գեղջ և վասն ձեռնադրութեան պատուիրել Առաջնորդի թեմին վարել ըստ յօդ. 1171, XI հատ. օր., դարձուցանելով ի Կոնսիստորիայն զվկայական ընծայացուին։ Հ. 818.

— Ի նոյն միտս ի 22-ն հոկտ. դարձեալ Կոնսիստորիային Շամախւոյ առ ի ձեռնադրել ի քահանայ զԳալուստ Շաղլխեանց ի վերայ ժողովրդեան Սաղեան գեղջ։ Հ. 840.

— Ի նոյն միտս Կոնսիստորիային Հայոց Նախիջևանի և Բեսարաբիոյ վասն ընդունելութեան ի հոգևոր կոչումն և ձեռնադրել զՆիկողայոս Դաւթեան ի վերայ ժողովրդեան Իւզովկայ գեղջ։ Հ. 811.

— Ի նոյն միտս Կոնսիստորիային Երևանայ վասն ընդունելութեան ի հոգևոր կոչումն և ձեռնադրել ի քահանայ

զԲարսեղն Յովհաննէսեան ի վերայ Ծխականաց Գեորգեանա գեղջ. Հ. 876.

— Ի 26-ն հոկտ. Սինոդն հրամայեաց հաստատել զամենայն կէտս եղբակացութեան Կոնսիստ. Ղարաբաղի, որպէս վասն տուգանելոյ զԹադէոս քահ. Տէր Յարութիւնեան Խոշկաշէն գեղջ Նուխուոյ գաւառի, զՆերսէս քահանայ Սեւագիւղու գեղջ նոյն գաւառի և զՄելքիսեդեկ քահանայ, գործակալ նոյն գաւառի, նոյնպէս և վասն յանդիմանելոյ զանդամս և զբարոյական Հոգևոր կառավարութեան Նուխուոյ անջատելոյ զնախչուանն Համբարձումեան ի Նիկոլայէ Արզանեանց, բնակչէ Մեծ Սեւագուղու գեղջ մինչ չհասանել յարբունս հասակի նորա և յանձնելոյ զՍարգիս քահանայն Յովսէփեանց Մեծ Սեւագիւղու գեղջ ի դատ քաղաքական իշխանութեան։ Վասն կատարման վճռոյն հանել հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի, դարձուցալով զգործն։ Հ. 854.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ շահաւէտ համարելով զառաջարկեալ պայմանս Ֆրանսիական ընկերութեան, բոլորագրութեամբ օրագրիս թոյլ տալ առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի կռել նոտարական կարգաւ դաշն ընդ յիշեալ ընկերութեան և Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս տալով ի վարձու զվանապատական դեռին մերձ առ գետովն Սանահնոյ, ուր ջրաղացն է վանուց Սանահնոյ, վասն կառուցանելոյ երկաթական կայարան երեսնամեայ ժամանակաւ, ի տարին մի հազար ռուբ. կանխիկ վճարիւ, մուծանելով ի դաշնագրին զամենայն յօդուածս վերոյիշեալ պայմանի։ Հ. 857.

— Ի 13-ն նոյեմբ. Սինոդն հրամայեաց՝ քանզի ըստ կանոնական կոնդակի ի Տէր հանգուցեալ կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Կարապետ Ծ. վարդապետն Տէր Մկրտչեան ընտրեալ է Առաջնորդ թեմին Հայոց Ատրպատականի միաձայն ընտրութեամբ պատգամաւորաց նորին՝ ուստի և առաջադրել նորին բարձրապատութեան անյապաղ փութալ ի տեղի պաշտամանն, տալով վասն անարգել

ճանապարհորդութեան ի Պարսկաստան զվկայական ի Սինոդէս յաղագս ընդունելոյ ի Նահանգապետէն Երևանայ զսահմանեալ անցագիր։ Զայսմանէ ծանուցանել Դիւանի փոխարքայի և զպատճէն օրագրոյս տալ Տ. Տեղակալի Ատենապետի Սինոդիս վասն պատշաճաւոր թղթակցութեան ընդ կուսակալին Ատրպատականի և ընդ Հիւպատոսի Ռուսայ, որ ի Դաւրէժ, առ ի ցուցանել նորոգ կարգեալ Առաջնորդին Հայոց զպատշաճաւոր աջակցութիւն ի գործառնութիւնս նորա ըստ պաշտամանն։ Հ. 870.

— Ի 19-ն նոյ. Սինոդն հրամայեաց նախ՝ ծանուցանել Դիւանի Փոխարքայի՝ թէ ի պատճառս մահուան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Սինոդս ոչ կարէ մտանել ի քննութիւն միջնորդութեան Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի որ վասն փոխադրութեան Հոգևոր Կառավարութեան ի Գորի քաղաքէ ի Բաթում։ Եւ երկրորդ՝ բացատրել Առաջնորդին Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի թէ վասն խնդրոյս հարկ էր դիմել ոչ անմիջապէս առ քաղաքական իշխանութիւնն, այլ առ բարձրագոյն Հոգևոր իշխանութիւն իւր։ Հ. 875.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց առաքմամբ պատճենից կտակաց հանգուցեալ վաճառականի Բագու քաղաքի Եղիայի Բուդուղեանց պատուիրել Կոնսիստորիային Շամախւոյ նախ՝ փութալ ընդունել ի կտակակատարացն և առաքել ի Սինոդս զերիս հազար ռուբլիս, կտակեալս յօգուտ Մ. Աթոռոյ, զհինգ հազար ռուբլիս, կտակեալս յօգուտ ճեմարանի Ս. Էջմիածնի, և զերկու հազար ռուբլիս, կտակեալս, յանուն Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ընդ ամենայն զտասն հազար ռուբլիս, յորպիսի դրամոց Սինոդս զառաջին երկուս գումարսն ունի յանձնել ըստ պատկանելոյն, իսկ զվերջին գումարն՝ ունի ի պահ մինչ ցընտրութիւն և ցհաստատութիւն նորոգ Հայրապետի ազգիս։ Եւ երկրորդ՝ ունել զհսկողութիւն, զի յիշատակեալ ի կտակսն գումարք, յատկացուցեալք եկեղեցական և դպրոցական հաստատու-

թեանց թեմին՝ անթերի ընկալցին և ի կիր արկցին ըստ մտաց կտակացն։ Հ. 879.

— Ի 3-ն դեկտեմբերի Սինոդն հրամայեաց կարգել զՏէր Գարեգին վարդապետն Յովսէփեան ի պաշտօնակատար վանահօր վանուցն ս. Հռիփսիմեայ ըստ խնդրագրի նորին, Հ. 901.

— Ի 17-ն դեկտ. Սինոդն հրամայեաց. նախ՝ համարելով զԳրիգորն Գուրգէնեան անհամապատասխան կոչման հոգևորականի ըստ ուսման և զընդունելն զնա ի հոգևոր կոչումն աւելորդ՝ մերժել զմիջնորդութիւն վանահօր ս. Թաչ վանուց վասն ընդունելոյ զԳուրգէնեանցն ի հոգևոր կոչումն, դարձուցանելով նմա զվկայականս իւր ընդ ստորագրութեամբ, երկրորդ՝ ունելով առաջի աչաց, զի ըստ օրինի (11 կ. 1188 յոդ. I մ. XI հատ.) իրաւունք միջնորդութեան առաջի Սինոդիս վասն ընդունելոյ զընծայացուս ի հոգևոր կոչումն վերապահեալ են Կոնսիստորիային թեմին, ուստի առնել նկատողութիւն վանահօր Տ. Եղիշէ Ծ. վարդապետի վասն միջնորդութեան ընդունելոյ զԳուրգէնեանցն ի հոգևոր կոչումն։ Եւ երրորդ՝ յանձն առնել Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոսի արգելուլ Գուրգէնեանցի ընդ ստորագրութեամբ, որպէս անձին աշխարհականի, չգանել զվերարկու և կրել զուրար, և զկատարածն յայտ առնել Սինոդիս մատուցմամբ ստորագրութեան Գուրգէնեանցի։ Հ.

Ամուսնալուծութիւնք

— Ի 10-ն հոկտեմբերի Սինոդն համեմատ եղբակացութեան Կոնսիստորիային Երևանայ հրամայեաց լուծանել զպսակ Մուշեղայ Նաւասարդեանց, բնակչի Թէջրլու գեղջ գաւառին Սուրմալիոյ, ընդ Թամարայ Այվազեան, տալով առն իրաւունս նորոյ ամուսնութեան ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրման Կոնսիստորիային Երևանայ, դարձուցանելով զգործն։ Հ. 799.

— Ի 19-ն հոկտ. Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի հրամայեաց լուծանել զպսակ Ելենայի Փիլիպոսեան Մկրտչեանց ընդ անյայտ տարակայեալ առն Մեժլումի Ալէքսանեան Մկրտչեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի դարձուցանելով զգործն։ Հ. 835.

— Ի նմին թուի Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Երևանայ հրամայեաց լուծանել զպսակ բնակչուհւոյ Բաշ գեղջ Կարուց վիճակի Թանումի Թորոսեան ընդ Յակովբայ Տուփինեանց ի պատճառս առնական անզօրութեան նորա, տալով կնոջն իրաւունս նորոյ ամուսնութեան ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Երևանայ, դարձուցանելով զգործս։ Հ. 836.

— Ի 22-ն հոկտ. Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Աստրախանի հրամայեաց լուծանել զպսակ Եղիսաբեթի Գալստեան ընդ Մինասայ Փարսադանեանց բնակչի Մոզդոկ քաղաքի, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Աստրախանի։ Հ. 845.

— Ի 22-ն հոկտ. Սինոդն համեմատ եղբակցութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, հրամայեաց լուծանել զպսակ բնակչուհւոյ Գանձակ քաղաքի Կատինկայի Յովհաննիսեան ընդ Շագրի Մալեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 847.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ բնակչուհւոյ Նոր Նախիջևան քաղաքի Իսկուհւոյ Մկրտչեան Հալաճեանց ընդ առն նորա Մինասայ Հալաճեան և տալ կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այ-

լում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ։ Հ. 848.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց. առեալ ի նկատ, զի Մարիամն Ստեփանեան Էլչեանց, բնակչուհի Տփխիս քաղաքի, պարտի ըստ զօրութեան 54 յօդ. X. հատ. I. մ. օր. զկնի հնգամեայ անյայտ բացակայութեան առն իւրոյ Դաւթի Էլչեանց յարուցանել խնդիր վասն լուծման պսակին, մինչդեռ այրն անյայտացեալ է յամին 1903, յորմէ հետէ անցեալ են ամք միայն չորս, ուստի մերժել զինդիր կնոջն վասն լուծման պսակին, կարճելով զայս գործ ի Սինոդիս։ Զայսմանէ տալ գիտել խնդրարկու Մարիամայ Էլչեանց ի ձեռն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 849.

— Ի 26-ն հոկտ. Սինոդն համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի հրամայեաց լուծանել զպսակ Կատարինեայ Վարդանեան Ասլամազեանց ընդ Աղէքսանդր Նուներան Ասլամազեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 853.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ի փոփոխումն օրագրի Սինոդիս ի 20-ն յունուարի 1903 ամի, լուծանել զպսակ բնակչի Վերին Խաթունարխ գեղջ Էջմիած. գաւառի Յարութիւնի Ղարախանեան ընդ Նուքարայ Յարութիւնեան և զկնի ենթարկելոյ զնոսա երկամեայ եկեղեցական ապաշխարանաց թոյլ տալ երկոցունց և մտանել յօրինաւոր ամուսնութիւն ընդ ապօրինի կենակիցս իւրեանց։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Երևանայ։ Հ. 855.

— Ի 31-ն հոկտ. Սինոդն համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի հրամայեաց՝ լուծանել զպսակ բնակչի Տփխիս քաղաքի Աղէքսանդրի Մարգարեանց ընդ Մանեկի Գրիգորեան, տալով առն իրաւունս մտանելոյ

ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 863.

— Ց 7-ն դեկտեմբերի Սինոդն համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ հրամայեաց լուծանել զպսակ Գալստի Պարոնեանց ընդ Նունեայ Պարոնեանց, բնակչաց Ն. Նախիջևան քաղաքի, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ, դարձուցանելով զգործն։ Հ. 918.

— Ց 7-ն դեկտ. Սինոդն համեմատ եզրակացութեան Կոնսիստորիային Աստրախանի հրամայեաց լուծանել զպսակ Արմաւիրցի Լուսիկի Մանուկեան ընդ Մովսիսի Մուղդուսեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Վասն կատարման վճռոյս հանել հրաման Կոնսիստորիային Աստրախանի, դարձուցանելով զգործն։ Հ. 919.

— Ի 14-ն դեկտ. Սինոդն հրամայեաց առնել յանդիմանութիւն Կոնսիստորիային Երևանայ վասն թոյլ տալոյ զպսակ կնոջն Սեդրակայ Խրիմեան, բնակչի Առինջ գեղջ գաւառին Երևանայ ընդ Վասլի Ստեփանեան, բնակչի Աշտարակ գեղջ, առանց նախապէս լուծման պսակի կնոջն ընդ անդարձ աքսորեալ Սեդրակայ Խրիմեան։ Հ. 927.

— Ի նոյն թուի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ Տփխիսեցի Մարիամայ Արսէնեան Տէր Ղուկասեանց ընդ Գէորգայ Բագրատեան Տէր Ղուկասեանց և տալ երկոցունց ևս կողմանց իրաւունս նորոյ ամուսնութեան, կնոջն անմիջապէս, իսկ առն՝ յետ արկանելոյ գնա ընդ վեցամսեայ եկեղեցական ապաշխարանաց։ Ի կատարումն վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, դարձուցանելով զգործն։ Հ. 928.